«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Է. ՀԵՄԻՆԳՈՒԵՅԻ «ԾԵՐՈՒՆԻՆ և ԾՈՎԸ» ՎԻՊԱԿԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԱՌԱՐԿԱ - ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ - ՍԻՐԱՄԱՐԳ ՊԱՐԶՅԱՆ

ՄԱՐԶ - ք.ԵՐԵՎԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - ԵՐԵՎԱՆԻ հ. 125 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտքի խոսք…… .. 3

Գլուխ Ա: Կենսագրության ուսուցումը…….. ..6

Գլուխ Բ: Մարդն ու բնությունը «Ծերունին և ծովը» վիպակում……..8

Գլուխ Գ: Վեպի դիպաշարն ու գաղափարական բովանդակությունը……9

Գլուխ Դ: Վիպակի կերպարները: Գեղարվեստական արժանիքները……...13

Գլուխ Ե: Ամփոփում……...……18

Օգտագործված գրականության ցանկ…… 25

Մուտքի խոսք

Էռնեստ Հեմինգուեյի «Ծերունին և ծովը» վիպակը հանրակրթական դպրոցներում ուսումնասիրվում է 8-րդ դասարանում հինգ կամ վեց դասաժամով, որոնցից մեկ դասաժամ հատկացվում է գրողի կենսագրությանը, վիպակի ժանրային առանձնահատկությունների ուսուցմանը:

Գրականության դասերին նորագույն մեթոդների ու հնարների հմտորեն կիրառումը մշտապես կարևոր բաղադրիչ է հանդիսացել ուսուցման նպատակին հասնելու համար: Մեթոդների ու հնարների բազմազանության մեջ ուսուցիչը պիտի կարողանա ընտրել թեմային համապատասխանող, համեմատաբար ավելի արդյունավետ, հետաքրքիր, ինչպես նաև սովորողների վերլուծական- քննադատական մտածողությունը զարգացնող միջոցներ, գործիքներ, թվային ռեսուրսներ: Արդյունավետ մեթոդների ընտրությունից է կախված առաջադրված նպատակի իրականացումը:

«Ծերունին և ծովը» վիպակի դասավանդման մեթոդները կարող են լինել բազմաշերտ ու ընդգրկուն, ինչպիսին ստեղծագործությունն է: Թեման ուսումնասիրելիս խորհուրդ է տրվում առաջնորդվել ԽԻԿ համակարգով և աշակերտակենտրոն սկզբունքով, ուշադրություն դարձնել խաչվող կամ ընդհանրական հասկացություններին: Եռափուլ համակարգի առանձին փուլերում կիրառել համապատասխան մեթոդներ ու հնարներ, առաջադրանքներ: Դրանք հմտորեն համադրելու և նպատակահարմար կիրառելու դեպքում ուսուցիչը առավելագույն արդյունքի կհասնի:Պարտադիր չէ, որ այս աշխատանքում ընդգրկված բոլոր մեթոդներն ու հնարները կիրառվեն վերջնարդյունքի հասնելու համար: Գրականության ուսուցիչը կարող է դրանցից մի քանիսը հաջողությամբ կիրառել կամ դասը պլանավորելիս համատեղել իր նախընտրած մեթոդի հետ և հասնել ցանկալի արդյունքի:

Յուրաքանչյուր դասի սկզբում գրատախտակին կարելի է գրել դասի նպատակներն ու վերջնարդյունքները, որպեսզի աշակերտներն ուշադիր լինեն և հստակ իմանան իրենց անելիքները:

Թեման ուսուցանելիս մի քանի դասաժամի ընթացքում առաջնորդվել հետևյալ նպատակներով՝

- Իմանա վիպակի՝ որպես պատմողական ժանրի ստեղծագործության առանձնահատկությունները:
- Իմանա հեղինակի կյանքի ու գործի մասին ընդհանուր տեղեկություններ:
- Կարողանա վարժ և արտահայտիչ կարդալ գրական տեքստը:
- Ցույց տա դեպքերի հաջորդական ընթացքը:
- Հասկանա և վեր հանի վիպակի գլխավոր գաղափարը և մեկնաբանի այն:
- Մեկնաբանի վիպակի հիմնական գաղափարը:
- Վերլուծի գրական կերպարները, բացատրի դրա զարգացումը:
- Գտնի տեքստում եղած խորհրդանիշներն ու մեկնաբանի դրանք:
- Ներկայացնի տեքստում հանդիպող տեղանքի, կենդանիների մասին տեղեկություններ:
- Կատարի բառային աշխատանք՝ անծանոթ բառերի դուրսգրում, բացատրությունների որոնում, հոմանիշային շարքերի կազմում, բառերի թեմատիկ խմբավորում:

Սովորողի դիրքորոշումը

- Առանձնացնի հերոսի բնավորության գծերը:
- Արժևորի երազանքի հետևից գնալու գաղափարը:
- Հասկանա և արժևորի այլ ազգերի մշակույթը :

- Գնահատի արտասահմանյան գրականության դերը որպես տարբեր երկրների ու ժողովուրդների մշակույթին ծանոթանալու միջոց:
- Արտահայտի սեփական հիմնավորված դիրքորոշումը:
- Բացատրի սեփական մոտեցումները՝ արժևորելով մյուսների տեսակետներն ու մոտեցումները:

Վերջնարդյունքներ

- Ներկայացնի տեքստի կառուցվածքը, վերլուծի երկի վերնագրի կապը բովանդակության հետ:
- Վեր հանի՝ ինչ կերպ է տեքստում արտահայտվում հույզը, զգացմունքը, ապրումը:
- Կարողանա վերարտադրել տեքստի հիմնական գաղափարն ու բովանդակությունը:
- Դուրս գրի յուրաքանչյուր կերպարին բնութագրող հատվածները:
- Կարողանա տեքստում գտնել խորհրդանիշները և մեկնաբանել դրանք:
- Հարստացնի բառապաշարը

ԳԼՈՒԽ Ա

Էռնեստ Հեմինգուեյ

1899-1961

Մարդուն կարելի է ոչնչացնել,

բայց հաղթելն անկարելի է:



Կենսագրության ուսուցումը: Գաղափար վիպակի մասին:

Նախապես սովորողներին հանձնարարում եմ տարբեր աղբյուրներից տեղեկություններ ու հետաքրքիր փաստեր հավաքել աշխարհահռչակ գրողի մասին, դիտել «Ծերունին և ծովը» վիպակի էկրանավորումը: Այնուհետև բոլորի ներկայացրած տվյալների հիման վրա հավաքում ենք մեկ ամբողջական ոչ շատ ծավալուն տեքստ: Կենսագրությունը ներկայացնում են հատվածաբար, մեկնաբանում ծագած հարցերը:

Աշ.- Ամերիկյան գրող Էռնեստ Հենինգուեյը 20-րդ դարի համաշխարհային գրականության առաջնակարգ դեմքերից մեկն է: Նա Նոբելյան մրցանակակիր է: Այդ բարձրագույն մրցանակի նա արժանացել է 1954թ. «Ծերունին և ծովը» վիպակի համար:

Աշ.- Ծնվել է 1899թ. հուլիսի 21-ին ԱՄՆ-ի Իլինոյս նահանգում: Զբաղվել է լրագրական գործունեությամբ: Որպես թղթակից եղել է Եվրոպայում, ապրել է նաև Փարիզում:Փարիզյան կյանքի մասին է «Տոն, որ միշտ քեզ հետ է» հուշագրությունը:

Աշ.- Նա մասնակցել է Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներին, ինչպես նաև Իսպանիայի քաղաքացիական պարերազմին: Նա դարձավ պատերազմից հուսահատ ներգաղթյալ հասարակության, այսպես կոչված, «կորուսյալ սերնդի» գրողը: Առաջին գիրքը «Մեր ժամանակներում» կոչվող պատմվածքների ժողովածուն է, որտեղ մանկության ու պատանեկության տարիների հուշերի կողքին տեղ են գտել նաև պատերազմի թեմաներով գրված պատմվածքներ:Պատերազմի թեման իր արտացոլումն է գտել նաև Հեմինգուեյի հետագա ստեղծագործություններում: Այդ գործերից ամենանշանակալիցը նրա «Հրաժեշտ զենքին» վեպն էր, որը լայն տարածում գտավ աշխարհի բազմահազար ընթերցողների շրջանում՝ մեծ հռչակ բերելով գրողին:Ուշագրավ են նաև նրա «Կիլիմանջարոյի ձյունները», «Մադրիդի վարորդները», «Կղզի օվկիանոսում»

ստեղծագործությունները: Հրատարակել է յոթ վեպ, պատմվածքների վեց ժողովածու և երկու ոչ գեղարվեստական աշխատություն:

Աշ.- Ազատ ժամերին Հեմինգուեյը սիրում էր զբաղվել որսորդությամբ, հատկապես ձկնորսությամբ: «Ծերունին և ծովը» վիպակի գլխավոր հերոսը՝ Սանտյագոն, ինչ-որ չափով հիշեցնում է Հեմինգուեյին իր կենսափորձով և կյանքի դժվարությունները հաղթահարելու կարողությամբ: «Մարդն ստեղծված չէ պարտություններին դիմանալու համար: Մարդուն կարելի է ոչնչացնել, բայց հաղթելն անկարելի է»[1]: Ինքը՝ Հեմինգուեյը, լինելով լրագրող, որսորդ, նավաստի, ձկնորս, ճամփորդ, զինվոր, ում մարմինը ամբողջովին ծածկված է սպիներով, ի հիասթափություն բոլորի, «չկռվեց» մինչև վերջ: Այնուամենայնիվ գրողը չդավաճանեց իր իդեալներին: «Տղամարդն իրավունք չունի անկողնում մահանալ,-ասում էր նա,- կա՛մ կռվում, կա՛մ էլ՝ հրազենի գնդակից»:

1961 թ. հուլիսին նա ինքնասպան է լինում նույն հրացանով, ինչով գրողի հայրն էր ինքնասպան եղել:

Աշ.- **Հետաքրքիր փաստեր**

Մի անգամ Հեմինգուեյը գրազ եկավ, որ վեց բառանոց պատմվածք կհորինի, որը նախկինում բոլոր գրվածներից կլինի ամենահուզիչը: Նա հաղթեց գրազը:

«Վաճառվում են մանկական կոշիկներ՝ երբեք չհագած» (անգլերեն՝ «For sale: baby shoes, never used.»[2]):

Աշ.- Հեմինգուեյը «Զմյուռնիայի նավահանգիստը» պատմվածքում պատմում է հայերի, հույների ցեղասպանության մասին, դատապարտում թուրքերի կազմակերպած կոտորածները: Նա կարևորում է ոչ թե ազգությունը, այլ մարդուն, որը պիտի ապրի և գնա իր երազանքների ետևից:

Աշ.- Հեմինգուեյը Վիլյամ Սարոյանի մասին ասել է. «Գիտեք, նա մի գրական առավելություն ունի բոլորիս հանդեպ. դա նրա հայ լինելն է»:

Աշ.- «Ծերունին և ծովը» վիպակը գրելու միտքը ծագել է 1930-ական թվականներին: Մի ամսագրում տպագրվում է հոդված, որտեղ ներկայացված էր լեգենդար վիպակի մոտավոր ֆաբուլան: Ծեր ձկնորսը դուրս է գալիս ծով և մի քանի օր առանց քնի և սննդի պայքարում է հսկա ձկան հետ, բայց շնաձկներն ուտում են ձկնորսի որսը: Հենց այս պատմությունն էլ 1951թ. դառնում «Ծերունին և ծովը»վիպակի հիմքը: Այս ստեղծագործությունը արժանացել է երկու պարգևի՝ ԱՄՆ-ի գրական բարձրագույն՝ Պուլիցերյան և համաշխարհային նշանակություն ունեցողՆոբելյան մրցանակների:

Կենսագրության ուսուցումը ամփոփել հարցադրումներով :

[1] Հեմինգուեյ, Ծերունին և ծովը
[2] https://hy.wikipedia.org/wiki/

Վեպի և վիպակի տարբերությունը ներկայացնել T–աձև աղյուսակի կամ Վենի դիագրամի միջոցով, այդպես ավելի լավ կտպավորվի հիշողության մեջ:

ՎԵՊ	ՎԻՊԱԿ
Գեղարվեստական արձակի ծավալուն տեսակ:	Վեպից փոքր է, պատմվածքից՝ մեծ:
Լինում են պատմական, արկածային, սիրային և այլն: Կարող է ունենալ հատորներ:	Ավարտուն մեկ երկ է: Գործողությունները վեպի պես ծավալվող չեն:



Կարելի է հանձնարարել գրել «Կենսագրական բանաստեղծություն», ինչը մշտապես հաճույքով են անում երեխաները:

Կենսագրական բանաստեղծություն (լրացնում են աշակերտները՝ ցանկության դեպքում ավելացնելով կամ պակասեցնելով սկզբնաբառերը և հնարավորինս հանգավորում ու ռիթմ ստեղծելով)

Անունն է-

Ծնվել է-

Հայրենիքն է-

Սիրում է-

Զգում է-

Վախենում է-

Աշխարհին տալիս է-

Կարիք ունի-

ԳԼՈՒԽ Բ

ՄԱՐԴՆ ՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ «ԾԵՐՈՒՆԻՆ ԵՎ ԾՈՎԸ» ՎԻՊԱԿՈՒՄ

2.1 Ծերունի ձկնորսի կյանքը. կենցաղն ու փոխհարաբերություններն աշխարհի հետ:
2.2 Ծերունին և ծովը. անքակտելի կապն ու հակամարտությունը: . .
2.3Միջառարկայական կապերը:

Դասարանը հնարավորության դեպքում կահավորել ՏՀՏ գործիքներով, որպես դիդակտիկ պարագաներ ցուցադրել վիպակում հանդիպող կենդանիների, աշխարհագրական տեղանքի, ծովի լուսանկարներ, ձկնորսական իրեր և այլն: Ցանկալի է ցուցադրել նաև Այվազովսկու «Իններորդ ալիքը»:

Սովորողներին հանձնարարում եմ գրել 5-րոպեանոց շարադրանք հետևյալ թեմաներից մեկով.

1.Ու՞մ եմ համարում ուժեղ մարդ և ինչու՞:

2. Ի՞նչ ձեռքբերում ունես, որին հասել ես դժվարությամբ:

3. Ինչպիսի՞ն եմ պատկերացնում ուժեղ և ազնիվ մարդուն:

4. Ո՞րն է մարդու իրական հարստությունը իմ կարծիքով:

Ընթերցում ենք պատասխանները:

<u>Կարելի է նաև **ծերունի**</u> և <u>**ծով**</u> բառերով մտագրոհ կազմակերպել՝ խթանելու սովորողների հետաքրքրությունը և ներգրավվածությունը:





Ցանկալի է նախապես հանձնարարել վիպակը կարդալ ամբողջապես, իսկ եթե դեռ չեն կարդացել, ապա կազմակերպել ուղղորդված ընթերցանություն՝ կանխատեսումներով և հատվածների մեկնաբանություններով: Ուսուցիչն ուղղորդող հարցերով վերլուծության է ենթարկում ընթերցված հատվածը

Միջառարկայական կապերը գտնելու և ճանաչողական հմտությունները զարգացնելու համար շատ հետաքրքիր հնար կարելի է կիրառել:Ուսուցիչը տեղեկացնում է, որ հյուրեր են ունենալու, որոնք կներկայացնեն տեղեկություններ վիպակում հանդիպող կենդանական աշխարհի, ձկնորսության, աշխարհագրական տեղանունների, անծանոթ բառերի, հերոսների հոգեվիճակների, վիպակի էկրանավորման մասին: Այդ հյուրերն են **բնագետը**, **ձկնորսը**, **աշխարհագրագետը**, **լեզվաբանը**, **հոգեբանը**, **ռեժիսորը**: Ուսուցիչը, երեխաների նախասիրությունները հաշվի առնելով, մեկ օր առաջ կատարում է դերաբաշխում և «հյուրերը» նախապատրաստվում են: Նրանք կարող են իրենց տեղեկությունները ներկայացնել սահիկաշարերով, թվային այլ ռեսուրսներ օգտագործելով կամ հարցերին պատասխանելով: Այս հնարը մեծացնում է սովորողների ներգրավվածությունը և հետաքրքրասիրությունը: Օրինակ՝ ձկնորսը ներկայացնում է ձկնորսության պատմությունից հետաքրքիր տեղեկություններ կամ իր փորձից ձուկ որսալու արդյունավետ հնարներ է ցուցադրում: Լեզվաբանը բացատրում է անծանոթ բառերի նշանակությունը և այդպես շարունակ:

ԳԼՈՒԽ Գ

ՎԻՊԱԿԻ ԴԻՊԱՇԱՐՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Կարդալ վիպակը և պատմել դիպաշարը:
3.2 Մանրամասն և համառոտ պատում:
3.4 Շնաձկան դեմ պայքարի խորհրդանշական իմաստը:
3.5 Ծերունու անհաջողությունը, որը նրա համար բարոյական հաղթանակի է վերածվում:
3.6 «Մարդուն կարելի է ոչնչացնել, բայց հաղթելն անկարելի է»:

Գործողությունները զարգանում են Կուբայի ձկնորսական փոքրիկ քաղաքում: Սանտյագոն հերթական անգամ պատրաստվում է ծով դուրս գալ:Արդեն 84 օր է, ինչ նա վերադառնում է առանց որսի: Ծերունին ձկնորսություն էր սովորեցնում հարևանի տղային՝ Մանոլինին, որը սիրում էր ծերունուն: Բայց տղայի ծնողները հիմա արդեն արգելում են իրենց որդուն ծերունու հետ ծով դուրս գալ՝ համարելով նրան անհաջողակ, և ուղարկում են նրան ավելի հաջողակ նավակ: Տղան կարոտում էր ծերունուն, երազում նրա հետ նորից ծով դուրս գալ և հոգ էր տանում նրա մասին. չէ՞ որ Սանտյագոն բոլորովին միայնակ էր ու աղքատ: Նրանք զրուցում էին բեյսբոլի, սպորտային հայտնիների, ձկնորսության և այն հեռավոր ժամանակների մասին, երբ Սանտյագոն երիտասարդ էր և և ձկնորսական նավով նավարկում էր դեպի Աֆրիկայի ափերը: Իր աղքատիկ խրճիթի աթոռին քնած՝ Սանտյագոն տեսնում էր աֆրիկյան ափերը և գեղեցիկ առյուծներ, որ դուրս էին եկել ձկնորսներին նայելու:

Հրաժեշտ տալով տղային՝ վաղ առավոտյան դուրս է գալիս ծով՝ ձկնորսության: Ծովը նրա տարերքն էր, այնտեղ նա իրեն ավելի ազատ ու հանգիստ էր զգում՝ ինչպես ծանոթ ու հարազատ տանը: Նա ծովին անվանում էր «la mar» (կանացի) և երբեք թշնամանք չէր զգում այդ քմահաճ, բայց միշտ ցանկալի տարերքի հանդեպ: Ծովում զրուցում էր թռչող ձկների, ծովային ծիծեռնակների, հսկայական կրիաների, բազմագույն ֆիզալիաների հետ: Այդ օրը մի հսկա ձուկ կուլ տվեց նրա հյուրասիրած խայծը և կեռիկը խրվեց սրտի մեջ: Մնում էր, որ դուրս գար ջրի երես, որպեսզի սպանվեր հարպունով: Բայց ձուկը միտք չուներ դուրս գալու: Նա հզոր ցնցումով նավակը քաշում է իր հետևից և

տանում բաց ծովի խորքերը:Ինչքա՜ն ժամանակ, ջանքեր ու համբերություն պահանջվեց Սանտյագոյից, մինչև որ ձուկը ցատկեց մակերես և հայտնվեց իր շլացուցիչ շքեղությամբ: Նա երբեք այդպիսի ձուկ չէր տեսել: Կլիներ մոտ տասնութ ոտնաչափ (5,5 մ.): Նրա սլացիկ մարմինը շողշողում էր արևի տակ: Ուներ մուգ մանուշակագույն գծեր կողերին, իսկ քթի տեղը հսկայական թուր էր՝ բեյսբոլի մահակի չափ երկար և թրի պես սուր:

Ծերունու ձեռքերը պարանը ձգելուց քրքրվել էին, նրա մեջքին նույնպես վերքեր էին, իսկ ոտքերը անզգայացել էին, բայց նա չէր ընկճվում: Նա պիտի բռներ ձկանը, որպեսզի ցույց տար տղային, թե ինչի է ընդունակ մարդը և ինչի կարող է դիմանալ: «Զու՛կ, ես քեզ շատ եմ սիրում և հարգում, բայց մինչև երեկո կսպանեմ քեզ»,- այսպես է ասում ծերունին հաջորդ օրը լուսադեմին:Հավաքելով իր վերջին ուժերը՝ ծերունին մղում է վճռական ճակատամարտը: Ձուկը պտտվում է նավակի շուրջը՝ սպառնալով շուռ տալ այն: Վերջին ճիգով ձկնորսը հարպունը խրում է նրա մարմինը:

Իր երազանքների ձուկը…Սա հաղթանակ էր: Ձուկը նավակին կապելով՝ կարծեց, թե ինքն է նավակով կցված հսկա ձկան կողին:Նման ձկան համար կարելի մեծ գումար ստանալ: Ժամանակն էր շտապել տուն՝ դեպի Հավանայի լույսերը: Այնուհետև ձկանը կապում է նավակի կողքից և պատրաստվում իր փառահեղ ավարով վերադառնալ: Ծովում մի քանի օր անցկացնելով՝ ուտում է տղայի տված ձուկը, իր բռնած փոքրիկ ձկներից և հասցնում է մի պատառ էլ հսկայական ձկնից համտեսել:

Դժբախտությունը հայտնվում է շնաձկան տեսքով: Գիշատչին գրավել էր արյունը, որ ծորում էր ձկան վերքից: Հարպունով զինվելով՝ ծերունին սպանում է նրան, բայց շնաձուկը հասցնուն է իր հետ ծովի խորքը տանել ձկնից մի կտոր, հարպունն ու պարանը: Ծերունին գիտեր, որ գալու են ուրիշները: Սկզբում ձուկը կուտեն, հետո էլ իրեն: Նա բարձրաձայն խորհում է մեղքի մասին: Մտածում էր, որ միգուցե նա չպետք է սպաներ այդ ուժեղ, ազնվացեղ ձկանը: Խորամանկությամբ հաղթեց նրան, իսկ ձուկը ազնվորեն կռվեց՝ նրան վնաս չտալով: Ո՛չ: Նա սպանեց ձկանը ոչ թե շահույթի մանր ցանկությունից ելնելով, այլ սպանեց հպարտությունից, քանի որ ինքը ձկնորս է, իսկ նա՝ ձուկ: Բայց ինքը սիրում է նրան, և հիմա նրանք լողում են կողք կողքի, ինչպես եղբայրներ: Այս խոհերի մեջ էր, երբ շնաձկների ոհմակը հարձակվում է ձկան վրա: Նրանք իրենց հզոր ծնոտներով խլում էին մսի կտորները: Ծերունին դանակը կապում է թիակին և այդ կերպ փորձում հեռացնել գիշատիչներին: Սպանում է ևս հինգ շնաձկան, վիրավորում մի քանիսին, բայց նրա ուժերից վեր էր գլուխ հանել ողջ ոհմակից: Հիմա նա շատ թույլ էր նման կռվի համար:

Երբ ծերունին խարխափելով հասավ Հավանայի ափը, նրա նավակի կողքին մի հսկայական կմախք կար միայն. շնաձկները ամբողջովին խժռել էին ձուկը:

Սանտյագոն մի կերպ հասնում է իր խրճիթը, պառկում մահճակալին և ձեռքերը պարզած՝ քնում է: Առավոտյան Մանոլինը գալիս է նրա խրճիթը, համոզվում, որ շնչում է, բայց հետո լաց է լինում՝ տեսնելով նրա ձեռքերի վերքերը:Նա ծերունու համար սուրճ և ուտելիք է խնդրում սրճարանի տիրոջից, որը բարի մարդ էր և երբեք չէր մերժում: Մինչ այդ ափին տեսել էր արդեն կմախքը: Հիմա ձկնորսներն էին հավաքվել նավակի շուրջը և զարմացած զննում էին կմախքը, չափում

երկարությունը: Նրանք այդպիսի ձուկ տեսած չկային: Տղան հսկում էր ծերունու քունը, իսկ նա երազում առյուծներ էր տեսնում:

Թեմայի ուսուցանումը ԿԱՊԿՈՒ երեխաների համար կազմակերպում եմ տարբերակված ուսուցմամբ՝ հաշվի առնելով սովորողի անհատական առանձնահատկությունները: Միջավայրային և ուսումնական գործընթացի հարմարեցումներ կատարելով՝ պարզեցնում ենք առաջադրանքները և նպատակադրումները: Կարելի է ցուցադրել մուլտֆիլմը, վիպակի էկրանավորումը կամ նկարների միջոցով ծանոթացնել բովանդակությանը և այլն:

Նպատակահարմար է կատարել խմբային աշխատանք «Քառաբաժան» պարզագույն հնարի օգնությամբ: Հանձնարարել պատասխանները գրել պարզ ընդարձակ նախադասություններով՝ դասը կապակցելով հայոց լեզվի ուսուցանվող թեմաներին:

1.Ի՞նչ էի տեսնում վիպակը կարդալիս:	2.Ի՞նչ ձայներ էի լսում վիպակը կարդալիս:
1. Տեսնում էի անսահման ծովը: 2. Իմ աչքերի առջև պատկերանում էր հսկայական թրաձուկը:	1. Լսում էի ջրի ճողփյունը: 2. Մեր ականջին հասնում էր Մանոլինի հեծկլտոցը ծերունու ձեռքերի վերքերը տեսնելիս:
3.Ի՞նչ էի զգում վիպակը կարդալիս:	4.Ի՞նչն էր կարևորը վիպակում:
1. Ես զգում էի Սանտյագոյի կամքի ուժը, նպատակին հասնելու վճռականությունը: 2.Հասկանում էի ծերունու ապրումները:	1.Ձկնորսն ապացուցում է իր գործում լավագույնը լինելը: 2. Նա, չնայած ծեր լինելուն, քաջությամբ դիմակայում է իր կյանքի ամենադժվար փորձությանը: 3. Այդ օրվանից Սանտյագոյի հանդեպ հարգանքն ու վստահությունը վերականգնվելու էին:

ԳԼՈՒԽ Դ

ՎԻՊԱԿԻ ԿԵՐՊԱՐՆԵՐՆ ՈՒ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Թեման ուսուցանելիս ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին.

4.1.Սանտյագոյի արտաքինը, տնակը, կենցաղը:
4.2. Արարքների հոգեբանական շարժառիթները, շրջապատի ազդեցությունը դրանց վրա:
4.3.ավատարիմ աշակերտը. երկու սերունդների ներկայացուցիչների անդավաճան ընկերությունը:
4.4.Հերոսների զգացմունքները:
4.5. Հերոսների զգացմունքները:
4.6.Վիպակի լեզուն և ոճը, նկարագրությունների վարպետությունը:

Սանտյագոյի արտաքինը	Սանտյագոն վաղուց այնպիսին չէ, ինչպիսին առաջ էր: Նրա ձեռքերը կորցրել են իրենց նախկին ուժն ու ճարպկությունը, խոր կնճիռները ակոսել են նրա դեմքը, պարանոցն ու ծոծրակը: Մշտական ծանր ֆիզիկական աշխատանքից և աղքատությունից նա նիհարել է և սմքել: Անփոփոխ են միայն ծովագույն աչքերը, «երբեք չհանձնվող մարդու զվարթ աչքերն» ու հզոր ուսերը:
Արարքների հոգեբանական շարժառիթները	Ծերուկ Սանտյագոն սովորական ծերունի չէր: Այս կերպարի մեջ գրողը խտացրել է իր վերաբերմունքը կյանքի, աշխարհի, բնության և մարդկանց հանդեպ: Ծերունու պայքարը նյութական չէ, այստեղ ոգեղենի հաղթանակն է: Միաձույլ բնության հետ՝ նա խորապես զգում է իր միայնակությունը, այդ իսկ պատճառով նրա անհաշտ հոգին մենամարտի մեջ է մտնում բոլոր կարծատիպերի հետ միայն հաղթելու և հաստատվելու համար:Նա չի բողոքում, հուսահատվում, ընկճվում, այլ մշտական պայքարի մեջ է մտնում իրենից ուժեղ երևույթների, բնության տարերքի, հսկայական ձկան, շնաձկների ու իր խեղճության հետ:Նա հպարտորեն պայքարում է, կարելի է ասել, մաքառում է՝ տանելով իր խաչը՝

	ճակատագիրը: «Մարդը նրա համար չէ ստեղծված, որ պարտություններ կրի»,- խորհում էր նա:
Հավատարիմ աշակերտը. երկու սերունդների ներկայացուցիչների անդավաճան ընկերությունը: Հերոսների զգացմունքները:	Սանտյագոն կարոտում է տղային: Նա շատ է կարևորում տղայի ներկայությունը իր կյանքում: Նրա մեջ տեսնում է իրեն:«Տղան, այ թե ով չի թողնում, որ մեռնեմ»,- մտորում է ծանր պահերին: Այս ընկերությունը նման է նաև վարպետի և աշակերտի հարաբերության: Տղան էլ միաժամանակ իրեն չի պատկերացնում առանց իր ուսուցչի: Դեռ ինչքա՛ն բան ունի նրանից սովորելու: Հիմա արդեն իրեն կթողնեն Սանտյագոյի հետ ծով դուրս գալ:Ինքն էլ նրա համար նոր գործիքներ կսարքի:
Վիպակի լեզուն և ոճը: **Նկարագրությունների վարպետությունը**	Գրված է պարզ, սեղմ, հարուստ է դարձվածքներով: Ունի փիլիսոփայական բնույթ: Տեքստը կատարյալ է, մեղեդային, ռիթմիկ, համահունչ է ծովի մակընթացությանն ու տեղատվությանը:

Օրագրային գրառում (լրագրողական հմտություն)

Խնդրել աշակերտներին իրենց պատկերացնել Սանտյագոյի կամ Մանոլինի կերպարում և կատարել օրագրային 5- 10 օրվա գրառում: Այս մեթոդը օգնում է աշակերտին կերպարի մտածելակերպի մեջ մտնել և պատկերացնել նրանց կենսակերպը, առօրյան:

Կենդանիների հետ հարաբերություններ (հետազոտություն կենդանիների վարքագծի վերաբերյալ)

Սանտյագոն իրեն հաճախ է համեմատում իր որսած հսկա ձկան հետ և նմանություններ տեսնում իր և նրա միջև:

Առաջադրանք

1.Բացահայտե՛լ այդ նմանությունները և այլ հատկանիշներ:

2.Ի՞նչ կենդանու հետ ես ամենից շատ առնչվում: Ինչպիսի՞ հատկանիշներով եք նման նրան կամ տարբեր: Ի՞նչ ընհանրություն կա ձեր միջև:

Սա փոքրիկ հետազոտություն է կենդանիների և նրանց վարքագծի վերաբերյալ:

Այնուհետև գրատախտակին գծում ենք «Վենի դիագրամ», և երեխաները լրացնում են թե՛ իրենց համար, թե՛ վիպակի հերոսների:

Վենի դիագրամ



Ի՞նչ ենք նկատում:

Յուրաքանչյուր դասի ավարտին խորհուրդ է տրվում վերլուծական – քննադատական միտքը զարգացնող հարցադրումներով ամփոփել: Կարելի է ձևակերպել, օրինակ, այսպիսի հարցեր.

1. Ո՞վ է ծերունու նախատիպը:
2. Ի՞նչ է կտակել մեզ վիպասանը:
3. Ի՞նչ է տալիս տեքստը ընթերցողին:
4. Ու՞մն է հասցեագրված:
5. Ե՞րբ է էկրանավորվել վիպակը:

6. Տանջու՞մ է Սանտյագոյին միայնակ ու չհասկացված լինելու հանգամանքը:
7. Մեր օրերու՞մ կան նրա ու Մանոլինի նման մարդիկ:
8. Ինչո՞վ էին առանձնահատուկ Մանոլինն ու Սանտյագոն:
9. Սանտյագոյի հմտությունը բացահայտող դրվագներ ներկայացրեք:

Կերպարի վերլուծության գծագիր (խմբային աշխատանք)



Այս մեթոդը կարելի է կիրառել իմաստի ընկալման փուլում: Առկա ուսուցման դեպքում բաժանել խմբերի և հանձնարարել տասը րոպեում լրացնել և ներկայացնել պատասխանը՝ բարձրաձայն քննարկելով: Եթե նկատում են հակասություն, ապա գրառում են համապատասխան բաժնում: Հաղթում է այն խումբը, որն ավելի արագ է ավարտում աշխատանքը, առկա են բոլոր մասնակիցների ձեռագրերը, և ձևակերպումներում հակասություններ չկան:

Հոգեվիճակի քարտեզ

Այս մեթոդը նպատակահարմար է կիրառել, եթե դասը անցկացվում է հեռավար ձևաչափով:Աշակերտները մեծացնում են պատկերները և Մանոլինի հոգեվիճակը արտացոլող գրառումներ անում:



ԳԼՈՒԽ Ե

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփիչ դասի ժամանակ նպատակահարմար է կիրառել համագործակցային, պրոբլեմային մեթոդներ՝ կարևորելով խաչվող հասկացությունները, միջառարկայական կապերը: Շատ կարևոր են կշռադատման փուլում ճիշտ հարցադրումները, որոնք զարգացնում են սովորողների քննական- վերլուծական մտածողությունը:

Դասարանը բաժանել վեց խմբի և քարտերի վրա գրել յուրաքանչյուր խմբի առաջադրանքը:

1-ին խումբ՝ **«Կապակցող»**	Ձեր առաջադրանքն է կապեր գտնել այս ստեղծագործության և իրական աշխարհի միջև: Ընթերցած նյութը շաղկապել անձնական կյանքի հետ, ձեզ ծանոթ մարդկանց խնդիրներին կամ կարդացած ուրիշ պատմությունների հետ:
2-րդ խումբ՝ **«Ցուցադրող»**	Ձեր հանձնարարությունն է ընթերցած նյութի վերաբերյալ մի պատկեր նկարել և վերարտադրել նկարի միջոցով: Դա կարող է լինել ուրվանկար, գծապատկեր, պաստառ: Մյուս խմբերը կարող են գուշակել, թե ինչ դրվագ է պատկերված կամ ներկայացված: Վերջում խումբը կներկայացնի իր տեսակետը:
3-րդ խումբ՝ **«Բառապաշարը հարստացնող»**	Ձեր առաջադրանքն է վիպակից գտնել կարևոր,անծանոթ, հետաքրքիր, ինչպես նաև՝ բանալի բառեր և մեկնաբանել դրանք:
4-րդ խումբ՝ **«Գրական նյութը լուսաբանող»**	Ձեր առաջադրանքն է տեքստում գտնել ու դուրս գրել յուրօրինակ հատվածներ, որ կուզեիք բարձրաձայն կարդալ: Հատվածներ, որոնցում երևում են հերոսների երազանքները, գեղեցիկին հասնելու ձգտումները, ուրիշների կողմից չհասկացվածությունը և այլն: Մեկնաբանել դրանք:
5-րդ խումբ՝ **«Հարցերի փունջ»**	Ձեզ հանձնարարվում է վիպակի համար կազմել հարցերի ցուցակ: Աշխատե՛ք, որ

	հարցերը շարժեն, աշխատեցնեն միտքը, ոչ թե ունենան ճշգրիտ պատասխաններ:
6-րդ խումբ՝ **«Ամփոփում»**	Ձեր հանձնարարությունն է կազմել նյութի համառոտագրությունը (օր՝ «Վիպակի կմախքը» մեթոդով) կամ հիմնական մտքերի, գաղափարների սեղմ շարադրանքը (կարելի է ներկայացնել «Փաստերի բուրգ» մեթոդով):

Վիպակի կմախքը



Փաստերի բուրգ

Հարցերի փունջ

Հարց	**Ենթադրվող պատասխաններ**
• Ի՞նչ են խորհրդանշում վիպակում ծովը, ծերունին, հսկա ձուկը, շնաձկները, առյուծները:	Ծովը կյանքն է՝ լի խոչընդոտներով և ձեռքբերումներով: Ծովը կյանքի բեռն է: Ծերունին մարդկային փորձն է խորհրդանշում և միևնույն ժամանակ նրա սահմանափակումները: Առյուծները ուժի, հզորության խորհրդանիշն են:
• Ի՞նչ զուգահեռներ կանցկացնեք մարդկության հետ:	Հաճախ ինքնուրույն մեծ ձեռքբերում ունեցող մարդուց խլում են իր «որսը» աշխարհի մեծ «շնաձկները»:
«Ես կարող եմ այնքան ուժեղ չլինել, որքան կարծում եմ…բայց ես գիտեմ շատ հնարներ»: • Ի՞նչ է ուզում ասել ծերունին այս խոսքերով:	Եթե մարդը խելացի է և համառ, նա կարող է շատ բան անել առանց հսկայական ուժի:
«Ավելի լավ է հաջողակ լինես: Բայց ես կնախընտրեի ճշգրիտ լինել: Հետո, երբ	Ծերունին մեծ զգուշությամբ էր նախապատրաստել իր ձկնորսական

բախտը գա, դու պատրաստ լինես»: • Ի՞նչ է ուզում ասել ծերունին այս խոսքերով:	հարդերձանքը: Նա ամեն ինչ արեց, որ մեծացնի իր ուզած բանը ձեռք բերելու հնարավորությունը: Նրա ձեռքի տակ գործիքը չպետք է խափանվեր կամ դավաճաներ իրեն:
«Նա հպարտ տեղավորվեց փայտի դեմ և իր տառապանքն ընդունեց այնպես, ինչպես որ եկավ…»: • Ու՞մ հետ է համեմատվում Սանտյագոն այս հատվածում:	Այս դրվագում Սանտյագոն(Սուրբ մարդ) համեմատվում է Քրիստոսի հետ, որը խոնարհությամբ ընդունեց իր ճակատագիրը:
• Ինչպիսի՞ն էր զբոսաշրջիկների վերաբերմունքը:Հասկանու՞մ են տեղի ունեցածը:	Նրանք ապշած են միայն կմախքի մեծությամբ և բոլորովին չեն հետաքրքրվում ծերունու ողբերգությամբ, որի մասին փորձում է պատմել վիպակի հերոսներից մեկը:
• Ո՞ւմ էր հաճախ հիշում Սանտյագոն դժվար պահերին:	Հիշում էր Մանոլինին (Էմմանուել – Աստված մեզ հետ է) ու ափսոսում, որ իր հետ չէ:

Տեքստի վերարտադրման այլ ձևեր

Քարտային աշխատանք

Տեքստից ինձ հայտնի է	Եզրակացնում եմ
«Թեկուզ և անարդար բան է դա, բայց ես ցույց կտամ նրան, թե ինչի է ընդունակ մարդը և ինչի կարող է դիմանալ»:	*Սրանից հետևում է, որ…..*
«Ափսոս, որ հեսանաքար չունեմ, պետք է հետս հեսանաքար բերեի»:	*Այս խոսքերը հուշում են, որ……*
«Անմտություն է հուսահատվելը, մանավանդ որ դա կարծեմ թե մեղք է»:	*Սա կարող է նշանակել, որ….*
« Ձկնորսությունը սպանում է ինձ ճիշտ այնպես, ինչպես որ չի թողնում՝ մեռնեմ: Տղան. ա՛յ թե ով չի թողնում, որ մեռնեմ»:	*Այս մտորումները հիմք են տալիս ենթադրելու, որ…..*
«Շատ ծեր եմ, որպեսզի կարողանամ մահակով շնաձուկ սպանել: Բայց կկռվեմ նրանց հետ, քանի դեռ թիեր ունեմ, մահակ ու ղեկալծակ»:	*Այս տողերում բացահայտվում է….*

Աշակերտներին բաժանել նմանատիպ բովանդակությամբ քարտեր իմաստի ընկալման և կշռադատման փուլերում:

Այս աշխատանքը կարևոր է գրավոր խոսքի զարգացման համար: Երեխաները սովորում են եզրահանգումներ անել՝որոշակի ձևակերպումներ օգտագործելով:

Ամփոփիչ դասի ժամանակ նախընտրելի է կազմակերպել նաև բանավեճ, օրինակ, հետևյալ թեմաներից մեկով.

1.«Կարելի՞ է արդյոք Սանտյագոյի ձեռնարկումը հաջողված համարել»:

2.«Այդպիսի վճռականությամբ ու արիությամբ օժտված մարդն ինչո՞ւ է թշվառ պայմաններում ապրում»:

Տնային հանձնարարությունները կարող են լինել բազմաբնույթ՝ հարցարանային, որոնողական, վերլուծական, նախագծային, ստեղծագործական: Թեմայի ուսուցման ընթացքում թեստային կամ հարցարանային եղանակով ստուգել սովորողների գիտելիքները, վերլուծել արդյունքները և անհասկանալի կետերը առանձնացնելով՝ համապատասխան փոփոխություններ կատարել դասի հետագա պլանում: Ստորև ներկայացնում եմ նաև այլընտրանքային առաջադրանքներ, որոնք կարող են հետաքրքրել երեխաներին:

Նախագիծ «5 օր»

Վիպակը պատմում է Սանտյագոյի և Մանոլինի կյանքի 5 օրվա մասին:

1.Արձանագրե՛ք ձեր կյանքի և արկածների 5 օրերը (դպրոցում, տանը):

2. Յուրաքանչյուր աշակերտ թող գնահատի իր կյանքի այդ 5 օրերը՝ տեսնելու, թե արդյո՞ք նմանություններ կան վիպակի հետ:

Այս նախագիծը կօգնի հասկանալ՝ արդյո՞ք իրենք կարող են ավելին անել մեկ օրում. դա կօգնի դպրոցում և առհասարակ կյանքում ճիշտ գնահատել ուժերը:

Կոլաժ

Սանտյագոն նավակի վրա ուներ իրեր, առանց որոնց նա չէր կարող անել որոշ բաներ: Մի քանի իրեր նա կարող էր դեն նետել, բայց ամեն դեպքում պահում էր:

1. Գույքագրե՛ք ձեզ շրջապատող իրերը. արդյո՞ք պետք են դրանք ձեզ: Ինչո՞վ են կարևոր: Կոլաժ ներկայացնել, կամ բերել այն իրերից, որոնք կարող էին չլինել, բայց դրանք կարևոր են ձեզ համար: Նաև ցույց տալ այն իրերը, առանց որոնց չեք կարող պատկերացնել ձեր կյանքը:

Սանտյագոյի մոտ այլևս գործիքներ չէին մնացել, որ կռվեր շնաձկների դեմ, բայց նա դեռ ուներ ղեկալծակ, թի և մահակ:

2.Կարո՞ղ ենք կիրառել մեզ շրջապատող իրերը ոչ ըստ նշանակության, եթե դրա անհրաժեշտությունը լինի (եղե՞լ է այդպիսի իրավիճակ, բերե՛լ օրինակներ):

Անդրադարձ

Այսպիսով, «Ծերունին և ծովը» վիպակի ուսուցման բազմաբնույթ մեթոդիկան թույլ է տալիս բոլոր սովորողներին (այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ) ներգրավել ուսումնառության մեջ, իրականացնել շերտավորված աշխատանք՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները: Շատ կարևոր է անդրադարձը, հետադարձ կապը՝ թերությունները շտկելու, ձեռք բերած գիտելիքները ամրապնդելու, ստեղծագործաբար աշխատելու համար:
Հույս ունեմ, որ այս աշխատանք որոշ չափով կօգնի սկսնակ ուսուցիչներին գրական տեքստ ուսուցանելիս նորագույն մոտեցումներ կիրառել և առավել մեծ արդյունքի հասնել:

Օգտագործված գրականության ցանկ

1.Հանրակրթության պետական չափորոշիչներ և ծրագրեր

2.Էռնեստ Հեմիգուեյ, «Ծերունին և ծովը», 2008

3.Դավիթ Գասպարյան, «Գրականություն», 8-րդ դասարան

4. Թամար Ալեքսանյան, Տեքստի վերարտադրման ձևերը

5. Ազատ հանրագիտարան

6. Edu Armenia https://www.eduarmenia.org/